ԱՆԱՀԻՏ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ԳՐԱԲԱՐԻ ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԴԻՏԱՐԿՄԱՄԲ

Ձեւաբանական նորմն արտահայտում է ձեւաբանական օրինաչափությունը[1]։ Խոսքի մասերի ձեւաբանական հատկանիշներն ամբողջանում եւ արտացոլվում են իրենց բնորոշ քերականական կարգերում։ Պիտի համաձայնել պրոֆ. Հ. Բարսեղյանի այն մոտեցմանը, որ Մ. Աբեղյանի կողմից հայերենի խոսքի մասերի վերլուծությունը արժեւորելիս պիտի հիշել, որ նա խոսքի մասերի համար կարեւորում է նրանց իմաստագործառական հատկանիշները եւս[2]։ Սա վերաբերում է նաեւ գրաբարի խոսքի մասերի եւ նրանց ձեւաբանական հատկանիշների քննությանը, որը նա կատարել է հետեւյալ աշխատություններում՝ «Գրաբարի համառոտ քերականութիւն» (Վաղարշապատ, 1907 թ.), «Գրաբարի դասագիրք»՝ 2 հատորով (առաջին գիրք՝ Թիֆլիզ, 1915 թ., երկրորդ գիրք՝ Թիֆլիս, 1916 թ.), «Գրաբարի քերականութիւն» (Երեւան, 1936 թ.)։

Գրաբարի դասագրքերը իրենց կառուցվածքով իսկ ցույց են տալիս, որ ձեւաբանական մակարդակի միավորները քննելիս հեղինակը մանրամասնում է նաեւ նրանց շարահյուսական գործառույթները, որոնք անմիջականորեն պայմանավորված են նրանց իմաստներով եւ դրանց կրողներն են։ Ընդգծենք, որ շատ կարեւոր են ծանոթությամբ տրվող նրա մեկնաբանումները, որոնք արտացոլում են գրաբարին բնորոշ օրինաչափությունները եւ դրանց հենքի վրա բացատրվող բացառությունները։ Օրինակ՝ հեղինակը, բացատրելով անցյալ դերբայի կազմությունը, ծանոթությամբ նշում է. «Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել անցեալ դերբայի հետեւեալ կիրառութեանը. Նոյն ենթական ու ժամանակն ունեցող երկու, երեք բայերից առաջինը սովորաբար դրւում է անցեալ դերբայով, եւ ենթական, մանաւանդ երբ անցեալ դերբայից յետոյ է գալիս,

---

[1] *Տե՛ս Զ. Աղաջանյան, Ձեւաբանական նորմ եւ խոսքի մշակույթի հարցեր, Երեւան, 2007, էջ 9—14։*

[2] *Հ. Բարսեղյան, Խոսքի մասերի ուսմունքը, Երեւան, 1980, էջ 163—204։*

դրւում է յաճախ իբրեւ սեռական խնդիր։ Այսպիսի անցեալ դերբայն աշխարհաբար թարգմանւում է կամ դիմաւոր բայով, կամ անորոշ դերբայի գործիական հոլովով»[3]։

Ձեւաբանական միավորների բնութագիրը հեղինակի վերլուծություններում ամբողջանում է նրանց իմաստագործառական հատկանիշների ներառմամբ։ Այսպես՝ անցյալ դերբայի հետ սեռականով ենթական այնքան է կարեւորվում, որ բաղադրյալ ժամանակների հարացույցում ամեն մի միավորի հետ տրվում է նաեւ սեռականով ենթակայի կառույց, օր.՝

տեսեալ իցեմ — իմ տեսեալ իցէ

տեսեալ եմ — իմ տեսալ է եւն[4]։

Մյուս կողմից՝ նա գրաբարի ուսուցման համար էական է համարում նյութի դիդակտիկ ճանաչողական ընկալումը, ուստի սեռականով ենթական, որը գրաբարի շարահյուսական մակարդակի առանձնակի իրողություններից մեկն է, պիտի ուսանելի դառնար իր ձեւաբանական հենքի մեկնաբանմամբ։

Հեղինակը սեռականով ենթական անվանում է սեռականով խնդիր, եղանակիչ բայերի հետ գործածվող ենթական՝ տրական խնդիր[5]։

Մ. Աբեղյանն անվանական եւ ձեւաբանական կարգերը քննում է գրաբարին նվիրված իր բոլոր աշխատություններում. ըստ որում՝ նրա մեկնաբանումներում կան տարբերություններ։ Նկատելի է նրա՝ գրաբարի ուսուցմանն ուղղված միտումը, ինչին նպաստում են ձեւաբանական կարգերը ներկայացնող հարացույցները։

Բայական ձեւաբանական կարգերից հեղինակը մեկնաբանում է սեռի, եղանակի, ժամանակի կերպի կարգերը, *իսկ* դեմքի *եւ* թվի *կարգերը ինքնին արտացոլվում են խոնարհման վերջավորությունների միջոցով եւ առանձին անդրադարձի կարիք չունեն։*

Հոլով եւ հոլովում եզրույթները հեղինակը մեկնաբանում է՝ դասական գրաբարի էական հատկանիշների ընդգրկմամբ։ Նա անվանական հոլովման հարացույցներում ընդգրկում է 6 հոլով, իսկ դերանվանական հոլովման ժամանակ սեռական եւ տրական հոլովներն առանձնացնում է՝ պայմանավորված կազմության տարբերությամբ։ Ներգոյական հոլովը, չունենալով առանձին ձեւ, նախդիրով կառույց է. ըստ այդմ՝

---

[3] Մ. Աբեղեան, *Գրաբարի համառօտ քերականութիւն, Վաղարշապատ, 1907, էջ 18։*

[4] *Տե՛ս* Մ. Աբեղեան, *Գրաբարի դասագիրք, առաջին գիրք, Թիֆլիզ, 1915 թ., էջ 118։*

[5] *Տե՛ս* Մ. Աբեղեան, *նշվ. աշխ., էջ 119։*

հարացույցում այն չի ընդգրկված, բայց նրան հեղինակն անդրադառնում է ի *նախդրի գործառույթները մեկնաբանելիս՝ «Ներգոյական հոլով» վերնագրով։ Այսինքն, այնուամենայնիվ, իբրեւ հոլովական միավոր՝ այն տարբերակված է։*

Զգործածելով պարզ *եւ* խառն, ներքին *ու* արտաքին *հոլովումներ եզրույթները՝ Մ. Աբեղյանը, ըստ սեռական-տրականի կազմության, անվանական 9 հոլովում է ներկայացնում. դրանք են՝* ի, ու-ուց, ոյ-ոց, ա-ացq, ի-ացq, ոյ-եացq, ան-անցq, ին-անցq, եր-երցq։ *Ունի կարեւոր դիտարկում սեռական-տրական հոլովների վերաբերյալ. «Սեռական եւ տրական հոլովներն անունների մէջ, ինչպէս աշխարհաբարում, միայն խօսքի մէջ ունեցած իրենց պաշտօնից են որոշւում»[6]։*

«Գրաբարի համառօտ քերականութիւն» աշխատության մեջ «Դերանուանական հոլովում» վերնագրի տակ հեղինակն առանձնացնում է դերանունների դեպքում՝ սեռական եւ տրական հոլովների եւ կազմության, եւ գործառույթի տարբերություններ. «Տրականի հետ կայ եւ առանձին սեռական հոլով, որ իբրեւ անուան լրացում է գործածւում, իսկ տրականը՝ իբրեւ բայի եւ ածականի խնդիր»[7]։

Մ. Աբեղյանը դասագրքերում հոլովումները ներկայացնում է ըստ սեռական-տրական հոլովիչների, սակայն «Գրաբարի համառօտ քերականութիւն» աշխատության մեջ «Ան հոլովում» *վերնագրով հստակորեն բացատրում է* ա *ներքին հոլովման եւ* ան *արտաքին հոլովման տարբերությունները. «Այս հոլովման տրականը, որ ունի* ան *կամ* եան *վերջը, կազմւում է երկու կերպ. կամ ուղղականի վերջի* ն *հնչիւնից առաջ մտնում է* ա, *իսկ շեղման մէջ՝* ի *(շեղման հոլովումներ է համարում երկու հոլովիչով հոլովումները, այն է՝ խառն հոլովումները.— Ա. Յ.) կամ ուղղականի վրա աւելանում է* ան *կամ* եան *վերջը»[8]։ Այնուհետեւ առանձին կետերով բնորոշում է այդ հոլովումների բառերի հատկանիշները, քանի որ նրանք ուղղականում ունեն նաեւ ձեւային տարբերակվածություն։*

Անվանական հոլովման մեջ գոյականների հետ հեղինակը ներկայացնում է թվականները, ստացական *դերանունները այլեւ* միւս, այլ, իւրաքանչիւր *դերանունները, որոնք ունեն անվանական հոլովում։ Ածականի հոլովման կարգին անդրադառնում է ածականի առանձին քննությամբ՝*

---

[6] Մ. Աբեղեան, *նշվ. աշխ., էջ 94։*
[7] Մ. Աբեղեան, *Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 121—122։*
[8] Մ. Աբեղեան, *Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 99։*

«Ածական անուն» *վերնագրի տակ։ Անորոշ եւ անցյալ դերբայներին բնորոշ անվանական* n արտաքին *հոլովման քննությունը հեղինակը կատարում է այդ դերբայների ձեւաբանական հատկանիշների շարքում։*

Հոլովների հարացույցները ներկայացվում են եզակի եւ հոգնակի թվի միավորների ընդգրկմամբ. անեզական գոյականներ *եզրույթի տակ հեղինակը ներառում է միայն հոգնակի թվի հարացույց ունեցող միավորները, «որոնք ունին միշտ յոգնականի ք»*[9] *բառի ուղիղ ձեւում։*

«Գրաբարի դասագրքի» երկրորդ գրքում առանձին վերնագրով նա քննում է հոլովների եւ նախդիրների գործառական հատկանիշները։ Առկայացման կարգն իբրեւ այդպիսին չի տարբերակում, սակայն նրա որոշ դրսեւորումների մասին ունի կարեւոր դիտարկումներ. հեղինակը զ *նախդիրի գործառույթին՝ իբրեւ որոշյալ առման կազմության բաղադրիչի, հայցական հոլովի կազմում, անդրադառնում է հայցական հոլովի կազմության եւ* զ *նախդիրի գործառույթների մասին խոսելիս։ Չնայած* u, դ, ն *հոդերն առանձին քննության է ենթարկում, բայց նրանց համար առանձնացնում է միայն ցուցական, ստացական, դիմորոշ իմաստները*[10]*։*

Նրանք չեն արժեւորվում նաեւ իբրեւ առկայացման կարգի (հոդային կարգ) արտահայտության միջոցներ, ինչը բնորոշ է գրաբարին. հմմտ.՝ գիրքս այս = այս գիրքը, գիքդ = քո գիրքը։ Հեղինակը «Գրաբարի քերականութիւն» աշխատության մեջ «Որոշող ն յօդի գործածութիւնը» առանձին վերնագրով նշում է ն *որոշիչ հոդի գործածությունները գրաբարում (էջ 167–169)։*

Քանի որ Մ. Աբեղյանը հայերենն արժեւորում է իբրեւ բայակենտրոն լեզու, Եւ գրաբարի, Եւ աշխարհաբարի քննությունն սկսում է բայական համակարգից։ Գրաբարի բայի ձեւաբանական կարգերը ներկայացնում է եղանակի, ժամանակի, թվի, կերպի, սեռի, դեմքի *կարգերի դիտարկմամբ, դեմքի եւ թվի կարգերի առանձին քննություն չի կատարում։* Եղանակի *քերականական կարգը հեղինակը ներկայացնում է 3 եզրով՝* սահմանական, ստորադասական, հրամայական*։ «Գրաբարի համառօտ քերականութիւն» աշխատության մեջ ստորադասական եղանակը ծանոթությամբ է հիշատակվում, մյուս աշխատություններում ստորադասականն առանձնացվում է իբրեւ առանձին եղանակ՝ ապառնի Ա եւ ապառնի Բ ժամանակաձեւերով։ «Գրաբարի դասագրքի» երկու մասերում ունի*

---

[9] Մ. Աբեղեան, *Գրաբարի դասագիրք, առաջին գիրք, էջ 92։*

[10] *Տե՛ս* Մ. Աբեղեան, *Գրաբարի դասագիրք, երկրորդ գիրք, էջ 137։*

«Հարկադրական եղանակ» վերնագրով քննված կառույց, որը կազմվում է պարտ *է,* պիտոյ *է,* արժան *է,* հարկ *է եղանակիչ բայերի, անորոշ դերբայի եւ տրականով դրված ենթակայի միջոցով։ Հրամայական եղանակի հարացույցում ունի* այջիր*-ով կառույցներ՝ խաղայջիր, աղայջիր եւն, որոնք պիտի համարել հունաբան դպրոցից եկած միավորների հիշատակում, քանի որ դրանք հիմնականում հանդիպում են Աստվածաշունչ Մատյանում*[11]*։*

Հորդորական հրամայականի ձեւերը քննվում են հրամայական ապառնի անվանումով.

Ժամանակ *եւ* ժամանակաձեւ *եզրույթները, ինչպես գրաբարագիտության մեջ ընդհանրապես, այնպես էլ Մ. Աբեղյանի աշխատություններում նույնանում են։ Ժամանակները (իմա՛ ժամանակաձեւը իբրեւ հարացուցային միավոր) կազմվում են ներկայի եւ կատարյալի հիմքերից. վերջիններս հեղինակը անվանում է* բնի ձեւեր*։ Ներկայի հիմքից կառույցները կոչվում են* լծորդի ձեւեր*, քանի որ նրանցում երեւում է լծորդիչը։ Հեղինակը զանազանում է* պարզ *եւ* բաղադրյալ *ժամանակներ՝ ըստ նրանց կազմության առանձնահատկության։ Բաղադրյալ ժամանակները կազմվում են ապառնի եւ անցյալ դերբայների միջոցով եւ* եմ, լինիմ *բայերի խոնարհված ձեւերով։ Ինչպես աշխարհաբարի, այնպես էլ գրաբարի համար, մեր կարծիքով կարեւոր է* ժամանակ *եւ* ժամանակաձեւ *եզրույթների տարբերակումը. ժամանակաձեւը տվյալ ժամանակային տիրույթի հարացուցային միավոր է. այս դեպքում անցյալ անկատարը, անցյալ կատարյալը եւ անցյալ դերբայով բաղադրյալ ժամանակաձեւերը, այլեւ ապառնի դերբայով եւ օժանդակ բայի անցյալի ձեւերով կառույցները կարժեւորվեն իբրեւ անցյալի տիրույթի ժամանակաձեւեր եւ ոչ թե ժամանակներ։*

Կարեւոր է բայի ժամանակների գործածությունների մանրակրկիտ քննությունը, որով հեղինակն արժեւորում է շարահյուսական մակարդակում բայական համակարգի միավորների հետեւյալ գործառույթները.

ա) սահմանական եղանակի ներկայի եւ անցյալ անկատարի բայաձեւերը երկրորդաբար գործածվում են ստորադասական ապառնու իմաստով,

բ) ստորադասական եղանակի բայաձեւերը, ըստ էության, ունեն կերպի տարբերություն՝ պայմանավորված իրենց կազմությամբ, բայց

---

[11] *Մանրամասն տե՛ս* Ա. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, *Մանուկ Աբեղյանն իբրեւ գրաբարագետ. «Աբեղյանական ընթերցումներ», Երեւան, 2016, էջ 165—166։*

դասական գրաբարում արդեն իսկ դրանց գործածությունների սահմանը խախտված էր,

գ) բայի ժխտական կառույցները հեղինակը քննում է «Բայի բացասական ձեւեր» վերնագրի տակ։ Նա նշում է, որ ժխտումը դասական գրաբարում կատարվում է մի, ոչ, չ, չեւ *մասնիկների միջոցով։* Մի *բացասական ձեւույթը գործածվում է արգելական հրամայականի բայաձեւերի, ստորադասական Ա եւ Բ ապառնիների եւ անորոշ դերբայի հետ (մի՛ գնալ, մի՛ անսալ եւն՝ արգելական հրամայականի իմաստով)։*

Ստոր. եղանակի բայաձեւերը բազմիմաստ են. դրանք համարժեք են սահմանական եղանակի ապառնուն, ըղձական, ենթադրական, հարկադրական ապառնիներին։ Դրական խոնարհման դեպքում ըղձական իմաստով, ըստ հեղինակի, գործածվում է «միայն ստորադասական ապառնի Բ, օրինակ՝ Անցեալ տեսից (= անցնեմ տեսնեմ) զտեսիլն զայն մեծ։ «Կերիցուք եւ ուրախ լիցուք (= ուտենք եւ ուրախանանք)։ Թող եկեսցէ դմա ուրախութիւն»։ Սա վերապահումով պիտի ընդունել. մեր դիտարկմամբ՝ ստորադասական II *ապառնու բայաձեւերը ըղձ. ապառնու իմաստով ավելի հաճախադեպ են ստոր.* I *ապառնու բայաձեւերի համեմատությամբ*[12]*։*

Բացասական խոնարհման համար հեղինակը նկատել է որոշակի տարբերություններ. «Բայց երբ բայը բացասական է, շատ սովորական է այս իմաստով, իբրեւ արգելական ապառնի նաեւ առաջին ապառնին, յատկապէս երբ խօսքը վերաբերում է ոչ թե մի անգամ, այլ յաճախ սովորաբար կատարուած գործողութեան, օրինակ՝ Մի՛ լինիցիս (= մի լիցիս չլինիս) որպէս կեղծաւորքն։ Մի՛ այսուհետեւ հոգայցէք (= հոգասջիք = չհոգաք) վասն վաղուի։ Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք (= չերթաք) եւ ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք (= չմտնեք)»[13]*։*

Ըստ էության՝ մի + ստոր. ապառնու *բայաձեւերը արգելական հրամայականի իմաստով հաճախ են հանդիպում, արգելական հրամայականի բայաձեւերը արտահայտում են նաեւ մեղմ հրաման եւ հոմանիշ կառույց են հանդիսանում հորդորական հրամայականի բայաձեւերին՝ ժխտական խոնարհման տիրույթում։ Այստեղ արդեն ունենք նաեւ ըղձականի*

---

[12] Մ. Աբեղեան, *Գրաբարի քերականութիւն, էջ 69։ Մանրամասն տե՛ս* Ա. Յուրքաշեան, *Գրաբարի ստորադասական եղանակի բայաձեւերը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում, Կանթեղ, Երեւան, 2003, էջ 111–119։*

[13] Մ. Աբեղեան, *Գրաբարի քերականութիւն, էջ 69։*

իմաստի ներկայությունը, օր.՝ մի՛ հեռասցես = մի՛ հեռացիր, չհեռանաս։ Ստոր. I ապառնու բայաձեւերը եւս գործածվում են այս իմաստներով, բայց II ապառնու բայաձեւերը շատ ավելի հաճախադեպ են։

Մ. Աբեղյանը կերպի *կարգը ներկայացնում է անկատար-կատարյալ հակադրությամբ. Անկատարը անվանում է* լծորդի, *իսկ* կատարյալը՝ *բնի ձեւեր։ Այս եզրույթներով հեղինակը, ըստ էության, ներկայացնում է ներկայի եւ կատարյալի հիմքի ձեւերը։* Լծորդի *ձեւերն արտահայտում են ընթացքի մեջ գտնվող, շարունակվող գործողություն, իսկ* բնի *ձեւերը՝ ավարտված, կատարված գործողություն։ Անշուշտ այլ են նրա դրույթները աշխարհաբարի բայական համակարգի կերպի մեկնաբանումներում. հեղինակն այս դեպքում ընդունում է կերպի 4 դրսեւորում՝* կատարվող *(գնում է, էր),* կատարված *(գնացել է, գնացել էր),* կատարելի *(գնալու է, էր), եւ* պարզ *կերպ (գնամ, գնացի, կգնամ)։*

Սեռի *կարգը գրաբարում արտահայտվում է խոնարհման վերջավորությունների միջոցով, ինչի մանրամասն վերլուծությունը Մ. Աբեղյանը ներկայացնում է գրաբարի քերականության՝ իր բոլոր աշխատություններում՝ անշուշտ անդրադառնալով նաեւ դերբայներին, որոնց դեպքում միեւնույն ձեւը արտահայտում է եւ ներգործական, եւ կրավորական սեռի իմաստ, օր.՝* սիրեալ *նշանակում է սիրել, սիրվել եւ սիրած, սիրված։ Երկսեռ են նաեւ հասարակ բայերը, օր.՝* ծնայ *նշանակում է ծնեցի եւ ծնվեցի։ Շարահյուսական մակարդակում ներգործական եւ կրավորական սեռի բայերը պահանջում են համապատասխանաբար* կրող *եւ* ներգործող *խնդիրներ, որ կոչվում են* սեռի խնդիրներ։ *Ըստ այդմ՝ բայասեռով չպայմանավորված խնդիրները* բնության խնդիրներ *են։ Այս առումով՝ հարկ է նշել մի անուրանալի փաստ. ընդգծված եզրույթները եւ խնդիրների նման տարբերակումը կատարված են հեղինակից առաջ։ Այսպես՝* Մ. Զամչյանը *տալիս է* բնության խնդիրների *հետեւյալ սահմանումը. «...այսինքն՝ այնպիսի զոր բնութիւն բային ըստ առաջին նշանակութեան իւրում պահանջէ»*[14], *օրինակ՝ «Առաքեաց* առ մեզ *զհոգի իւր»*[15] *են։*

Վիթ Զալխյանը գրում է. «Բայերն... երկրորդական հոլով մ՚ալ կառնուն որ կըսուի խնդիր բնութեան *եւ գործողութեան այլեւայլ պարագա-*

---

[14] *Քերականութիւն Հայկազնեան լեզուի, Յորինեալ ի Հ. Միքայէլ Վարդապետէ Զամչեանց, ի Մոսկվա, 1859, էջ 204։*

[15] *Նշվ. աշխ., էջ 103։*

ները կը ցուցընէ...։ Խնդիր բնութեան ամէն հոլով կրնայ դրուիլ բային բնութեան կամ նշանակութեան համեմատ»[16] *(ընդգծումները մերն են.— Ա. Յ.), այնինչ՝ սեռի խնդիրները, որ պայմանավորված են բայասեռով, դրվում են հայցական եւ բացառական հոլովներով։ Հեղինակը բնության խնդիր է համարում նաեւ բաղադրյալ ստորոգյալի վերադիրները, օր.՝ «Կամիմ զձեզ* իմաստունս *լինել ի բարիս եւ անմեղս ի չարիս»։*

Ա. Այտնյանը եւս բնության խնդիրները բայիմաստով եւ ըստ այդմ՝ խոսքային տիրույթում դրանց դրսեւորումներով է պայմանավորում. «Խնդիր բնութեան այն պատահական խնդիրն է, որ անուղղակի հայեցում մ'ունի իւր բային եւ խօսքին իմաստին համեմատ. որեւիցէ՝ հոլով կրնայ դրուիլ»[17]*։ Հեղինակը մանրակրկիտ քննում է տարբեր հոլովներով արտահայտվող բնության խնդիրները։ Ինչպես տեսնում ենք, գրաբարի գիտական շարահյուսության հիմքերը ձեւավորվել են ավելի վաղ՝ ի դեմս նշված քերականների։*

Մ. Աբեղյանը խնդիրների տարբերակման այս սկզբունքը պահպանում է նաեւ աշխարհաբարի համար՝ հավելելով պարագայական խնդիրներ (նկատի ունի պարագաները), օր.՝ Նա գնաց դպրոց։ *Հեղինակը դերբայի եւ ածականի լրացումներն անվանում է կողմնակի խնդիրներ*[18]*։*

Մ. Աբեղյանը խոսքի մասերի համար կարեւորում է իմաստը, ձեւը եւ գործառույթը, ուստի սպասարկու խոսքի մասերն անվանում է խոսքի մասնիկներ, որոնք ունեն քերականական մասնիկների արժեք։

Ձեւաբանական կարգերը գրաբարում նա բնորոշ է համարում իմաստակիր բառախմբերին. բայական կարգեր՝ թվի, դեմքի, ժամանակի կերպի, սեռի, ժխտման անվանական կարգեր՝ հոլովման թվի եւ առկայացման կարգեր։ *Թվականը եւ ածականը հոլովվում են անվանական հոլովումով, եւ հոլովման կարգը նրանց խոսքիմասային հատկանիշն է եւ ոչ թե փոխանվանական գործառույթով պայմանավորված հատկանիշ, ինչը վերաբերում է նաեւ անորոշ եւ անցյալ դերբայներին։*

Ածականը՝ իբրեւ այդպիսին, ըստ Մ. Աբեղյանի, տարորոշվում է խոսքում՝ պայմանավորված իր գործառույթով, օր.՝ գեղեցիկ խոսել եւ

---

[16] *Քերականութիւն Հայկազնեան լեզուի, աշխատասիրեաց Հ. Վրթանէս, Վ. Զալէսեան, Վիեննա, 1885, էջ 222։*

[17] *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Յօրինեաց Հ. Արսէն Վ. Այտընեան, Վիեննա, 1883, էջ 97։*

[18] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Երեւան, 1965, էջ 299—375։*

գեղեցիկ աղջիկ. գեղեցիկը *ածական է՝ գոյականի հետ գործառույթում։ Ստացական դերանունը, ըստ նրա գործառույթի, հեղինակն անվանում է* ածական-վերադիր։ *Այսպիսով՝ Մ. Աբեղյանը, ինչպես աշխարհաբարում, այնպես էլ գրաբարում ձեւաբանական նորմերը սահմանում է՝ քննելով խոսքի մասերի ձեւաբանական կարգերը։ Յուրաքանչյուր ձեւաբանական կարգ ձեւի եւ իմաստի անխզելի միասնություն է կազմում. իմաստի դրսեւորումը երեւում է տվյալ խոսքի մասի շարահյուսական գործառույթում, որը հեղինակի համար էական դեր է կատարում՝ խոսքի մասերի տարբերակման համար։*

РЕЗЮМЕ

М. Абегян подчеркивает важность морфологических и синтаксических признаков частей речи. Он различает части речи и частицы. В работе представлены морфологические категории классического грабара (древнеармянского языка), их характерные нормы и исключения по работам М. Абегяна, посвященные изучению грабара.

SUMMARY

M. Abeghyan emphasizes the importance of morphological and syntactic features of parts of speech. He distinguishes between parts of speech and grammatical particles. The paper presents the morphological categories of the Classical Armenian language, their characteristic norms and exceptions based on the works of M. Abeghyan dedicated to the study of the Classical Armenian language.